ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՔՎԵԱՐԿԵՆՔ ԿԱՊԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆԻ ՕԳՏԻՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2500: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՈՒՐԲԱԹ, 12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018Թ.
№ 25 (483)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Խաղաղութի՛ւն ունեցէք միմեանց միջեւ:
Պողոս Առաքեալ

Գեւորգ Ռազմիկի Փարսյան

Ծնվել է 1985թ. սեպտեմբերի 17-ին Կապան քաղաքում: Միջնակարգ կրթությունն ստացել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կապանի հենակետային վարժարանում (2002թ.)՝ մինչ այդ սովորելով Կապանի N 3 եւ N1 դպրոցներում:
2002թ. ընդունվել է Երեւանի պետական համալսարանի իրավագիտական ֆակուլտետը, այն ավարտել 2009-ին՝ բակալավրի աստիճանով: 2012-2014թթ. սովորել է Երեւանի պետական համլսարանի տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսական քաղաքականություն եւ իրավունք» բաժում՝ ստանալով մագիստրոսի աստիճան:
2004-2006թթ. ծառայել է Հայաստանի զինված ուժերում:
Սովորելուն զուգահեռ՝ 2009 թվականից սկսել է աշխատանքային գործունեությունը:
2009թ. հուլիսի 1-ից մինչեւ 2014թ. հունիսի 4-ն աշխատել է Կապանի «Նորոգշին» ՍՊ ընկերությունում՝ իրավաբան:
Այնուհետեւ ու մինչեւ այժմ «Ռազ-Բիլդինգ» ՍՊ ընկերության գլխավոր տնօրենն է:
Ամուսնացել է 2013 թվականին, ունի երկու դուստր:
Անկուսակցական է:

Խոսք ընտրողին

Սիրելի հայրենակից
2018թ. հոկտեմբերի 21-ին տեղի կունենա Կապան բազմաբնակավայր համայնքի ղեկավարի արտահերթ ընտրություն:
Համայնքապետի թեկնածու է առաջադրվել նաեւ Կապանի արժանավոր զավակներից մեկը՝ Գեւորգ Ռազմիկի Փարսյանը:
Անկեղծության, քաղաքացիական պատասխանատվության եւ իրականության հետ առերեսվելու այս ժամին, նախեւառաջ, հորդորում ենք մեր համաքաղաքացիներին ու համերկրացիներին՝ անպայման մասնակցել ընտրությանը:
Կոչ ենք անում նաեւ՝ քվեարկել Գեւորգ Փարսյանի օգտին՝ վստահ լինելով, որ քվեարկում եք հանուն Կապանի, հոգուտ ձեր այսօրվա դժվարությունների հաղթահարման, հանուն մեր երեխաների վաղվա օրվա:
Գեւորգ Փարսյանը որեւէ կուսակցության, որեւէ թիմի կամ խմբավորման թեկնածու չէ, ինչը, մեծագույն արժեք է ստեղծված իրավիճակում:

Գեւորգ Փարսյանը բոլոր կապանցիներիս թեկնածուն է եւ առաջադրվել է մեզանից շատերի ուղղակի պահանջով:

Համոզված եղեք՝ նա այն անձնավորությունն է, ով լավագույնս ու արժանապատվորեն է կրելու մեր քաղաքի ու մերձակա գյուղերի ղեկավարման ծանր բեռն առաջիկա

8

Կառուցենք, նորոգենք, շենացնենք...

Համարի նյութերը տրամադրել է Կապանի համայնքապետի թեկնածու Գեւորգ Փարսյանի նախընտրական շտաբը:

Կարծիքներ

Գեւորգ Փարսյանի կերպարը ժամանակակիցների ընկալումներում

ՀԱՍՄԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Գեւորգ Փարսյանի ուսուցչուհի

Կարծում եմ՝ ուսուցիչների մեծ մասը տարիներ անց իրենց նախկին աշակերտներին առավել սիրով են հիշում, որովհետեւ կրտսեր դպրոցից նրանց մանկական չարաճճի, սրամիտ, հումորով լի արարքներն են մտապահում (հատկապես, եթե խոսքը վերաբերում է տղաներին):

Միջին եւ ավագ դպրոցից ազատություն, ինքնուրույնություն ստանալու, անհատականության կայացմանը միտված դրսեւորումների խենթություններն են հիշում:
Սա ընդհանուր է, որ տարիներ անց հիշում եմ:
Իսկ հիմա փորձեմ այդ ընդհանուրի միջից առանձնացնել Գեւորգին՝ իրեն բնորոշ հատկանիշներով.

- ընկերասիրություն, որի վկայությունը նրա նվիրյալ ընկերների հսկայական ջոկատն էր քաղաքի բոլոր անկյուններում, քաղաքի բոլոր դպրոցներում,
- ընկերների այդ ջոկատում միջոցառումներ ձեռնարկելու, կազմակերպելու ուրույն ձեռագիրը,
- առատաձեռնությունը, հոգու շռայլությունը, իր ունեցածը մեծ ու փոքրի հետ առանց ափսոսանքի կիսելու հատկությունը,
- հարգալից վերաբերմունքն իր ծնողների եւ իր ընկերների ծնողների, ուսուցիչների նկատմամբ:

Մտածում եմ, որ համադասարանցիները, ընկերները, կարդալով այս նկարագիրը, հիմնականում համամիտ կլինեն: Բայց շատ բան էլ կավելացնեն, որովհետեւ Գեւորգը միշտ էլ լի էր հանելուկներով, առեղծվածներով, որը շատ տեսանելի էր շրջապատին, քիչ՝ ուսուցիչներին: Բնական է:
Ավարտեմ բարեմաղթանքով՝ **ապագայի համար սերմերը միշտ անվախ եւ վստահ ցանիր...**

ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ
«Դալմա ինվեստ» ՍՊԸ տնօրեն, իրավաբանական գիտությունների թեկնածու

Գեւորգ Փարսյանին ճանաչում եմ 2002 թվականից, երբ ընդունվեցի Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, որտեղ ընդունվել էր նաեւ ինքը:
Սովորելով ավելի քան հարյուր ուսանողի հետ, կարող եմ առանձնացնել Գեւորգին՝ որպես չափազանց կազմակերպված, դաստիարակված եւ առաջնորդին հատուկ հատկանիշներով օժտված, հային վայել՝ ընտանիքին նվիրվածությամբ, ընկերասիրությամբ եւ հայրենասիրությամբ:
Պատանեկան տարիքից արդեն իսկ ուներ հասուն մարդու մտածելակերպ:

Միշտ հատուկ սիրով եւ նվիրվածությամբ է արտահայտվել իր ծննդավայր Կապանի մասին, ու ակնածանքով վերաբերվել: Ունենալով բազում հնարավորություններ եւ աշխատանքի առաջարկներ մայրաքաղաք Երեւանում՝ երբեւիցե չի ցանկացել ապրել այնտեղ՝ նախապատվություն տալով իր բնօրրանին՝ ձգտելով օգտակար լինել:
Գեւորգի հետ միասին ընդունվեցինք նաեւ ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետ (որպես 2-րդ մասնագիտություն), սակայն սովորելով մեկ ուսումնական տարի, ես ծանրաբեռնվածության պատճառով թողեցի ուսումս, ինչը չի կարելի ասել Գեւորգի մասին, ով իրեն հատուկ նպատակասլացությամբ ավարտին հասցրեց նաեւ այդ ուսումը:

ՍՈՒՍԱՆՆԱ ՕՀԱՆՋԱՆՅԱՆ
Գեւորգ Փարսյանի ուսուցչուհի

Միշտ հաշտեցնողի դերում էր: Պատրաստակամ՝ օգնելու ընկերոջը: Իր հասակակիցների համեմատ ավելի հասուն էր: Որեւէ միջոցառում կազմակերպելու համար գրեթե միշտ վստահում էի նրան: Համադասարանցիները սիրում ու հարգում էին նրան: Սովորում էր լավ, հատկապես հումանիտար առարկաները:

Չեմ սխալվի, եթե ասեմ, որ նա հարգանքով էր վերաբերվում իր ուսուցիչներին, եւ դա կեղծ չէր:
Չարաճճիությամբ աչքի չի ընկել: Ավելին՝ միշտ փորձում էր դասարանը եւ դասարանցիներին պահել խաղաղության մեջ:
Աչքի էր ընկնում հավասարակշռությամբ եւ կարողանում էր դժվարին իրավիճակներից դուրս գալու ելք գտնել:
Խաղաղասեր էր եվ լավ ընկեր:

Կառուցենք, նորոգենք, շենացնենք...

Հիմնադրույթներ

Կապանի համայնքապետի թեկնածու Գեւորգ Փարսյանի նախընտրական ծրագիր

Կապան խոշորացված համայնքում բազմաթիվ հիմնախնդիրներ կան՝ եւ տասնամյակների խորքից եկող, եւ վերջին տարիներին առաջացած: Դրանցից յուրաքանչյուրի լուծումը, անշուշտ, անհրաժեշտ է; Սակայն հանրապետության ներկայիս սոցիալ-տնտեսական իրավիճակում հնարավոր չէ դրանց բոլորի միաժամանակյա եւ հիմնավոր լուծումը, այն էլ՝ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով: Ուստի եւ առանձնացնում ենք հարցերը, որոնց լուծմանն առաջնայնություն կտրվի: Առանձնացնում ենք նաեւ մի քանի սկզբունքներ, մտադրություններ, գործունեության ուղղություններ, որոնք մեր պատկերացմամբ կարեւոր են համայնքի ընթացքի ներկա փուլում:

- Համայնքապետի եւ համայնքապետարանի հանդեպ բնակչության հավատի ու վստահության ամրապնդում:
- Հնարավորինս ակտիվացնել բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանն առնչվող հարցերի քննարկմանն ու լուծմանը:
- Գույքագրել, հաշվառել համայնքի մեջ մտնող ամեն մի բնակավայրի առաջնահերթ խնդիրները եւ դրանց հիման վրա մշակել ու կառավարություն ներկայացնել Կապանի տարածաշրջանի գյուղապահպանության երկարաժամկետ ծրագիր:
- Մասնագիտական, փորձագիտական հանձնախմբի միջոցով ուսումնասիրել տարածաշրջանի բնապահպանական վիճակը (փաստագրել հիմնախնդիրները, գնահատել ռիսկերը) եւ մշակել իրավիճակից բխող միջոցառումների համալիր ծրագիր՝ կարեւորելով հատկապես ռիսկերի նվազեցումը, պատճառված վնասների փոխհատուցումը:
- Համայնքային բյուջեի սեփական եկամուտների (հարկերի եւ տուրքերի) բազայի գույքագրում, սեփական եկամուտների ավելացման հնարավորությունների ուսումնասիրում:
  Աշխատանքները կազմակերպել այն հաշվով, որ արդյունքներն արտացոլվեն համայնքի 2019թ. վարչական բյուջեում:
- Կադրերի ընտրության եւ տեղաբաշխման ոլորտում՝ նախ՝ մարդկանց տալ լիարժեք ինքնադրսեւորման հնարավորություն, իսկ առհասարակ՝ պրոֆեսիոնալիզմը դարձնել գլխավոր չափանիշ:
- Սոցիալական արդարության ապահովումը (համայնքապետարանի գործառույթների մեջ մտնող հարցերում) պահել ուշադրության կենտրոնում:
- Արցախյան պատերազմում զոհված ու վիրավոր ազատամարտիկների ընտանիքների սոցիալական պայմանների բարելավմանը հետամուտ լինել, ուշադրության կենտրոնում պահել համայնքի տարածքում տեղաբաշխված զինվորական կառույցների հոգսերը:
- Մանկապարտեզների, երաժշտական եւ արվեստի դպրոցների, հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական եւ բուհական հաստատությունների հիմնախնդիրները պահել ուշադրության կենտրոնում, աջակցել
- Վեր հանել նախորդ տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության եւ հանրապետական գերատեսչությունների՝ Կապան քաղաքին եւ համայնքի մեջ միավորված գյուղերին առնչվող որոշումները, ծրագրերը եւ ուսումնասիրել դրանց կատարման ընթացքն ու անհրաժեշտության դեպքում այդ մասին տեղեկացնել ՀՀ կառավարությանը կամ համապատասխան գերատեսչություններին՝ դրանց իրականացմանը միտված կոնկրետ առաջարկություններով:
- Համայնքում միասնության, համերաշխության, հանդուժողականության մթնոլորտի վերականգնումը, հատկապես համայնքի ընդհանրական շահերին առնչվող հարցերում, համարել առաջնահերթություն՝ անկախ մարդկանց քաղաքական հայացքներից ու կուսակցական պատկանելությունից:
- Համայնքի բնակիչների շահերի պաշտպանություն, կատարվող աշխատանքների հրապարակայնություն ու թափանցիկություն, աջակցություն քաղաքացիական հասարակության հետագա ձեւավորմանը:

Կարծիքներ

Նրա մեջ առաջին իսկ պահից նկատել եմ ավագին հարգելու, ընկերոջը սիրելու եւ թույլին օգնելու մարդկային հատկանիշները:

ԱՐՄԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Գեւորգ Փարսյանի ուսանողական ընկեր, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի Եվրոպական եւ միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու

Գեւորգին ճանաչում եմ դեռեւս ուսանողական տարիներից: Ուսանողական կյանքի առաջին իսկ օրերից սկսած նրա մարդամոտությունն ու կապանցուն բնորոշ պարզությունը հող հանդիսացան հետագա մեր ընկերական հարաբերությունների ձեւավորման համար: Ուսումնառության ամբողջ ընթացքում աչքի էր ընկնում բարձր կարգապահությամբ, օրինակելի ուսանողին հատուկ պարտաճանաչությամբ եւ բարձր առաջադիմությամբ: Շատ մարդասեր էր եւ պատրաստ էր միշտ օգնության հասնել ոչ միայն ընկերներին, մտերիմներին, այլ նաեւ ցանկացած անձի, ով կդիմեր իրեն: Գեւորգին ճանաչում եմ որպես ազնիվ, արդարամիտ, մարդկային հարաբերություններն արժեւորող եւ իր հայրենիքի բարեկեցության համար մտահոգված անձնավորություն:

Համոզված եմ, որ համայնքապետի այն թեկնածուն է, ով կարող է լուծել Կապանի առջեւ ծառացած հիմնախնդիրները, եւ քվեարկելով Գեւորգի օգտին՝ կապանցին կքվեարկի իր քաղաքի ու գյուղերի բարեկեցության համար:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻԿՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Գեւորգին ճանաչում եմ 2002 թվականից, երբ առաջին քայլերն էր կատարում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում՝ մասնագիտական գիտելիքներ ստանալու ուղղությամբ: Ուսումնառության սկզբնական շրջանից Գեւորգն աչքի էր ընկնում սովորելու հանդեպ ձգտումներով եւ բարձր առաջադիմությամբ: Կապանցուն ներհատուկ բարությամբ Գեւորգը համակուրսեցիների հետ կարողացել էր ստեղծել ջերմ եւ փոխադարձ հարգանքի վրա կառուցված միջավայր: Նրա մեջ առաջին իսկ պահից նկատել եմ ավագին հարգելու, ընկերոջը սիրելու եւ թույլին օգնելու մարդկային հատկանիշները: Հատկապես ընդգծված հարգանք ուներ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի նկատմամբ: Համոզված եմ, որ Գեւորգը այն թեկնածուն է, ով կարող է հաղթահարել յուրաքանչյուր մարտահրավեր:

ՄԻՔԱՅԵԼ ՄԱԿԻՆՅԱՆ

Գեւորգ Փարսյանի ուսանողական ընկեր, իրավաբանական գիտությունների թեկնածու

Գեւորգ Փարսյանին ճանաչում եմ 2002 թվականից, երբ երկուսս էլ ընդունվել էինք Երեւանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետ: Սովորելով միեւնույն կուրսում՝ սկզբից եւեթ սկսել ենք ընկերություն անել: Օժտված է մարդկային բարձր հատկանիշներով՝ ընկերասիրություն, ընկերոջն օգնելու պատրաստակամություն: Լինելով 17 տարեկան՝ նա իր մտածելակերպով, վերաբերմունքով կարծես տասը տարով մեծ լիներ հասակակից կուրսընկերներից: Մի խոսքով՝ տղամարդուն հարիր դրական բոլոր հատկանիշներով է օժտված Գեւորգ Փարսյանը: Ես շատ ուրախ եմ, որ ունեմ Գեւորգի նման հիանալի ընկեր: Գեւորգը շատ է սիրում իր ծննդավայրը՝ Կապանը եւ երբեք չի ցանկացել ապրել մեկ ուրիշ քաղաքում:

Միշտ հատուկ սիրով եւ նվիրվածությամբ է արտահայտվել իր ծննդավայր Կապանի մասին, ու ակնածանքով վերաբերվել:

Հայեցողություններ

դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը:

- Հասարակական կարգի եւ ընդհանրապես իրավակարգի ամրապնդման նպատակով համագործակցել շահագրգիռ կազմակերպությունների եւ մարմինների հետ:
- Գործող օրենքի շրջանակներում ուժեղացնել հսկողությունն իրավապահ մարմինների կողմից համայնքի տարածքում տարվող աշխատանքների հանդեպ:
- Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հայաստանյան գրասենյակների հետ:
- Կոնկրետ գործերով հարստացնել քույր քաղաքների հետ բարեկամությունը:
- Համայնքի տնտեսության դիվերսիֆիկացումը, տնտեսության առաջընթացի ապահովումը համարել կարեւոր առաջնահերթություն:
- Փոքր եւ միջին բիզնեսի ոլորտում խրախուսել դրական նախաձեռնությունները եւ ցույց տալ համապատասխան աջակցություն:
- Տեղական հումքի եւ տեղական հնարավորությունների արդյունավետ օգտագործում:
- Ներդրումների համար համայնքում ստեղծել բարենպաստ ու գրավիչ պայմաններ:
- Զարգացնել գործընկերային առանձնահատուկ հարաբերություններ «Զանգեզուրի ՊՄԿ», «Պոլիմետալ ինթերնեշնլ» ընկերությունների հետ՝ հաշվի առնելով նրանց բացառիկ դերը համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման, հոգեւոր-մշակութային կյանքի աշխուժացման գործում:
- Մշակել համայնքում իրականացվելիք երիտասարդական քաղաքականության հայեցակարգ, որի մեջ ներառել զբաղվածության խնդրի աստիճանական կարգավորումը, ազատ ժամանակի եւ հանգստի խելամիտ կազմակերպումը, երիտասարդ ընտանիքների հիմնախնդիրների աստիճանական եւ հետեւողական լուծումը, մոր եւ մանկան առողջության ոլորտում բարենպաստ պայմանների ստեղծումը, երիտասարդության հայրենասիրական եւ ֆիզիկական դաստիարակությունը:
- Մշակույթի եւ սպորտի ոլորտում նոր մոտեցումներ, մշակութային կյանքի աշխուժացման խթանում:
- Բազմաբնակարան շենքերի, դրանց տանիքների ու վերելակների նորոգում, նորացում, պահպանում:
- Մայթերի կառուցապատում, համայնքի տարածքով հոսող գետերի հենապատերի եւ ճաղավանդակների նորոգում:
- Նեղ, բանուկ փողոցներում երթեւեկության ծանրաբեռնվածության թեթեւացում:
- Զբոսաշրջության զարգացմանը նպաստող միջոցառումների կազմակերպում, համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում, աջակցություն ոլորտի ընկերություններին, անհատ ձեռներեցներին:
- Նախակրթարաններում՝ առողջ ու անվտանգ սնունդ, հանգստի նորմալ պայմաններ, նորացված ու ժամանակակից գույք, աջակցություն մանկավարժական կադրերի մասնագիտական մակարդակի բարձրացմանը:
- Աշխատանքներ՝ ուղղված համայնքի հետագա կանաչապատմանը, ծաղկազարդմանը. այդ նպատակով գյուղական բնակավայրերում տնկարանների հիմնում:
- Հատուկ կարիքավոր անձանց աջակցության կազմակերպում, հարմարեցված աշխատատեղերի ստեղծում, թեքահարթակների կառուցում:
- Աղբահանության, սանիտարական մաքրման աշխատանքների արդյունավետ կազմակերպում:
- Կապան քաղաքով հոսող Վաչագան եւ Ողջի գետերի հունի մաքրում ու սանիտարական պատշաճ վիճակի ապահովում:
- Համայնքի սանիտարական վիճակի ապահովման գործին մասնակից դարձնել համայնքի տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտներին ու հասարակական կազմակերպություններին:
- Համայնքի բնակավայրերում գիշերային լուսավորության ընդլայնված ժամանակացույցի կիրառում (մասնավորապես՝ գիշերային լուսավորություն՝ քաղաքի ծայրամասերում, գյուղական բնակավայրերի առավել բանուկ մասերում):
- Քաղաքում եւ գյուղական բնակավայրերում հասարակական տրանսպորտի աշխատանքի կանոնավորում:
- Ջրահեռացման համակարգի ընդլայնում, նորոգում:
- Երթեւեկելի հատվածներին կից մանկական խաղահրապարակների ցանկապատում՝ անվտանգության ապահովման նկատառումներով:
- Խաղահրապարակների ստեղծում՝ հանգստի, ժամանցի պայմանների նորագույն լուծումներով:
- Քաղաքի թաղամասերում եւ գյուղական բնակավայրերում հանգստի գոտիների կառուցում:
- Պատմամշակութային հուշարձանների եւ կոթողների, քանդակների պատշաճ պահպանություն, դրանց շրջակայքի անաղարտության ապահովում եւ գեղարվեստական լուսավորում:
- Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու տարածքում հանգստյան գոտու կառուցում:
- Պատկերասրահների, թանգարանների, գրադարանների արդիականացում:

Նշված հիմնադրույթները, սկզբունքները, մտադրությունները մեր ծրագրի հենքն են միայն:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում բարձրացվող առաջարկությունները հետագայում հաշվի կառնվեն, ինչի շնորհիվ եւ կամբողջացվի սույն ծրագիրը:

Ընտրվելու դեպքում նախընտրական ծրագիս հիման վրա ավագանու հետ միասին, կվերանայենք Կապան համայնքի զարգացման՝ մեկ տարի առաջ հաստատված հնգամյա ծրագիր եւ կձգտենք կյանքի կոչել այն:

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ
9 հոկտեմբերի 2018թ.

Այսօրվա երկիր
www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ • 12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018Թ • № 25 (483)

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ.

«Ես ծառայություններ եմ առաջարկում իմ համայնքին՝ հավատացնելով, որ արժանապատվորեն կկատարեմ համայնքապետի պարտականությունը»

Հայաստանում տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից հետո նորանոր երեւույթներ ի հայտ եկան մեզանում եւ հատկապես պետական ու հանրային կյանքի կառավարման ոլորտներում:

Նոր իրողություններից մեկը, որ ուշագրավ է, ղեկավար կադրերի հետեւողական երիտասարդականացումն է: Պետության կառավարման գրեթե բոլոր ոլորտներում տեսնում ենք նաեւ երիտասարդների, ովքեր մինչ այդ քաղաքական ասպարեզում այնքան էլ հանրահայտ չեն եղել: Այդ գործընթացը կամ երեւույթն աստիճանաբար համակում է նաեւ տեղական ինքնակառավարման մարմիններին: Հոկտեմբերի 21-ին Կապանում կայանալիք համայնքապետի ընտրությանը մասնակցելու համար առաջադրվել են նոր ու երիտասարդ դեմքեր:

Կարծեք՝ պատմության էջ է փակվում մեզանում. բազմաթիվ դեմքեր, գործիչներ, ովքեր տարիներ շարունակ ՏԻՄ ընտրությունների առաջատարն էին, ովքեր տեւական ժամանակ կառավարել են համայնքը, հրաժարվել են նման հավակնություններից՝ դրանով իսկ ճանապարհ բացելով երիտասարդների առջեւ:

Այո, նոր ժամանակներ են սկսում նաեւ մարզկենտրոնում՝ երիտասարդ դերակատարներով:

Եվ նոր գործող անձանցից մեկն էլ Գեւորգ Ռազմիկի Փարսյանն է, ով հավակնում է Կապան խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնին:

Գեւորգ Փարսյանը 33 տարեկան է: Հատկապես երիտասարդության շրջանում հայտնի է նկատելի հեղինակությամբ: Համեմատաբար քիչ հայտնի է ընտրողների լայն շրջանին, քանի որ հանրային հարթակներից գրեթե չի ներկայացել համերկրացիներին, ուստի եւ նրա հետ հարցազրույցը պահանջված ու սպասված է այս օրերին:

Գարոն Փարսյան, նախ ողջունում ենք Ձեր հայտը՝ մասնակցելու Կապանի համայնքապետի առաջիկա ընտրությանը եւ ցանկանում հաջողություններ՝ ի նպաստ Կապանի եւ ընդհանուր տարածաշրջանի:

– Շնորհակալություն մաղթանքների համար:

– Հատկապես Կապանի երիտասարդությունը Ձեզ լավ գիտի, Ձեր գերդաստանին ճանաչում է ամբողջ համայնքը: Բայց նման դերում Դուք առաջին անգամ եք հանդես գալիս, եւ ընտրողներից ոչ բոլորը գիտեն Ձեր մասին: Նման մարդկանց պարզագույն մի հարց է հետաքրքրում՝ ո՞վ է Կապանի համայնքապետի թեկնածու Գեւորգ Փարսյանը:

– Ծնվել եւ ապրում եմ Կապան քաղաքում, սովորել եմ քաղաքի թիվ 3 եւ թիվ 1 միջնակարգ դպրոցներում, որից հետո ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի վարժարանում:

2002թ. ընդունվել եմ Երեւանի պետական համալսարանի իրավագիտական ֆակուլտետը, որն ավարտել եմ 2009թ., իսկ 2004-2006թթ. ծառայել եմ հայոց ազգային բանակում: Ուսումս շարունակել եմ նաեւ դրանից հետո՝ որպես երկրորդ մասնագիտացում սովորել եմ ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետում, իսկ 2012թ. ընդունվել ԵՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի «Տնտեսական քաղաքականություն եւ իրավունք» բաժինը:

Սովորելուն զուգահեռ 2009-ից անցել եմ աշխատանքի: Նախ՝ Կապանի «Նորոգշին» ՍՊԸ-ում՝ իրավաբան, այնուհետեւ «Ռազ-Բիլդինգ» ՍՊԸ գլխավոր տնօրեն: Եվ մինչեւ հիմա զբաղեցնում եմ այդ պաշտոնը:

– Ո՞րն եք համարում Ձեր կենսագրության ամենակարեւոր դրվագը, մինչեւ հիմա Ձեր կատարած նշանակալից գործը:

– Իմ կենսագրության կարեւոր դրվագներից մեկը համարում եմ հայոց ազգային բանակում ծառայելը. համոզված եմ՝ դա կարեւոր է ամեն մի հայ տղամարդու համար:

Հայ տղամարդու համար կարեւոր է նաեւ ընտանիք կազմելը. ամուսնացել եմ 2013-ին, ունեմ երկու դուստր:

Մյուս արածներս կամ գործերս հաջորդում են դրանց:

– Ենթադրում ենք, որ ընտրապայքարի եք ելել հաղթելու վճռականությամբ. սովորաբար նման տրամաբանությամբ է յուրաքանչյուր ոք մասնակցում ընտրամարաթոնի: Ո՞րն է, ըստ Ձեզ, Ձեր հնարավոր հաղթանակի գրավականը, կապանցի ընտրողների հատկապես ո՞ր խավն է քվեարկելու Գեւորգ Փարսյան թեկնածուի օգտին, քաղաքագիտության լեզվով ձեւակերպենք՝ ո՞րն է թեկնածուի սոցիալական հենարանը կամ ռեսուրսը ընտրողների շարքերում:

– Անպայման հաղթելու վճռականությամբ եմ ընտրությանը մասնակցում:

Կարծում եմ՝ բոլոր կապանցիների թեկնածուն եմ, գոնե այս հարցում ընտրողներին խավերի բաժանելը ճիշտ չեմ համարում:

Իսկ հաղթելու գրավականը նախ եւ առաջ իմ ու գերդաստանիս բարի համբավն է, մեր ընտանիքի կատարած աշխատանքը, Կապանին ծառայելու մեր կարողությունն ու պատրաստակամությունը:

> Թավշյա հեղափոխությունը ողջունել եմ եւ միանշանակ դրական եմ վերաբերվում:

– Մենք դրական արձագանքներ եւ կարծիքներ ենք լսում Ձեր առաջադրման կապակցությամբ, սակայն հնչում են նաեւ տարակույսներ: Ասում են, օրինակ, որ Ձեր հաղթանակի գրավականը Ձեր հայրն է՝ Ռազմիկ Փարսյանը, ով ճանաչված շինարարի համբավ ունի տարածաշրջանում, նաեւ հեղինակություն:

Իսկապե՞ս այդպես է, թե՞ ապավինում եք նախեւառաջ Ձեր անձին ու հեղինակությանը:

– Ես շատ ուրախ եմ, որ հորս՝ Ռազմիկ Փարսյանի կերպարը նման ընկալում ունի:

Իհարկե, նրա գործոնը կարեւոր նշանակություն է ունենալու: Բայց ես ե՛ւ նախընտրական պայքարում, ե՛ւ ընտրվելուց հետո ապավինելու եմ նախեւառաջ սեփական ուժերիս:

– Քիչ առաջ խոսեցինք Ձեր սոցիալական հենարանի մասին, բայց ոչ պակաս կարեւոր է քաղաքական հենարանը:

Կուսակցապետություն դարձած մեր Հայաստանում Դուք, որքանով տեղյակ ենք, անկուսակցական եք, նախկինում էլ որեւէ կուսակցության չեք անդամակցել:

Հայաստանյան կուսակցությունների կապանյան կառույցներից ո՞ր մեկի հետ եք համագործակցում, ո՞ր կուսակցության ծրագիրն է շատ թե քիչ Ձեզ սրտամոտ եւ հոգեհարազատ, նախընտրական այս օրերին փորձե՞լ եք բանակցել նրանց հետ՝ համագործակցելու, գուցեեւ աջակցություն ստանալու համար :

– Իրոք որ անկուսակցական եմ, նախկինում էլ ոչ մի կուսակցության չեմ անդամակցել:

Հայաստանում գործող բոլոր կուսակցություններին էլ հարգում եմ, կարծում եմ՝ ամեն կուսակցություն ձգտում է իր հնարավորությունների չափով ծառայել մեր ժողովրդին:

Սակայն չեմ հետապնդում որեւէ քաղաքական ուժի գաղափարներ:

Համագործակցում եմ ընտրողների, առանձին մարդկանց հետ, ովքեր նաեւ կուսակցական պատկանելություն ունեն:

Իմ համակիրների շարքում կան ներկայացուցիչներ Հայաստանում գործող գրեթե բոլոր կուսակցություններից:

– Ամիսներ առաջ՝ ապրիլ-մայիսին, Հայաստանում տեղի ունեցավ մի իրադարձություն, որին ընդունված է անվանել թավշյա հեղափոխություն:

Ձեր վերաբերմունքն այդ իրադար-



ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՂԱՔ ԿԱՊԱՆ

ծությանը:

Արդարանո՞ւմ են արդյոք Ձեր եւ մեր սպասելիքները, թե՞...

– Թավշյա հեղափոխությունը ողջունել եմ եւ միանշանակ դրական եմ վերաբերվում:

Այդ հեղափոխության շնորհիվ ստեղծված մթնոլորտը եւ իրավիճակն են նաեւ թույլ տվել, որ ծառայությունս առաջարկեմ իմ համայնքին:

Սպասելիքներ, անշուշտ, շատ ունեմ, ինչպես որ ամեն մի հայ մարդ, բայց արդյունքների մասին խոսելու համար վաղ է:

– Ապրիլ-մայիսյան իրադարձությունները տեղի ունեցան, կարելի է ասել, մեր ժողովրդի մեծ մասի կամքով ու մասնակցությամբ:

Առավել ակտիվը, շարքի առջեւում կանգնածը, սակայն, «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունն էր՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ:

Եվ այդ ուժը հոկտեմբերի 21-ի ընտրությունում Կապան համայնքի ղեկավարի իր թեկնածուն է առաջադրել:

Ինչպե՞ս եք վերաբերվում այդ իրողությանը, արդյո՞ք դժվար չի լինի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության թեկնածուի հետ մրցակցելը:

– Հեղափոխությունը տեղի է ունեցել ժողովրդի միջոցով՝ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ:

Նորմալ եմ վերաբերվում իրողությանը, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամն ինքնաառաջադրվել է համայնքապետի թեկնածու. դա յուրաքանչյուրի իրավունքն է:

«Քաղաքացիական պայմանագիր»-ը կառավարող քաղաքական ուժ է եւ, իհարկե, փոքր հանգամանք չէ դա ներկա ընտրապայքարում: Բայց Նիկոլ Փաշինյանը նաեւ իմ վարչապետն է, իմ երկրի ղեկավարը, ով, ինչպես ինքն է հայտարարել քանիցս, արդար եւ օրինական ընտրության երաշխավոր է: Եվ ես ակնկալում եմ ազնիվ ու մաքուր մրցակցություն:

– Այսինքն՝ Դուք համոզված եք, որ Կապանում տեղի կունենա օրինական, արդար, մրցակցային, կամայականություններից զերծ ընտրություն, որ վարչական ռեսուրսը չի գործի, եթե նույնիսկ վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելի Կապան եւ անձամբ մասնակցի իր գլխավորած քաղաքական ուժի թեկնածուի քարոզարշավին:

– Ուզում եմ հավատալ, որ վարչական ռեսուրսը չի օգտագործվելու եւ Կապանում տեղի է ունենալու օրինական, ազատ եւ արդար ընտրություն:

– Երբ մարզերում խոսվում է վարչական ռեսուրսի մասին, կամա- ակամա հիշում ենք մարզպետարանն ու համայնքապետարանը եւ նրանց ենթակա ստորաբաժանումներն ու հատկապես հանրակրթության, առողջապահության ոլորտները, այդ բնագավառների աշխատողներին, պետական ծառայողներին: Կարծում եք՝ այդ կառույցները եւ նրանց աշխատակիցները չեզոքությո՞ւն կպահպանեն նույնպես եւ ընտրություն կկատարեն իրենց կամքո՞վ:

– Ես համարյա թե պատասխանել եմ Ձեր հարցին: Միայն ավելացնեմ, որ հանրակրթության եւ առողջապահության ոլորտներում, նաեւ պետական կառույցներում մեր մտավորականության մեծ մասն է ընդգրկված:

Չեմ կարծում, որ մտավորականին ինչ-որ կամք թելադրելը հեշտ գործ է: Եթե, իհարկե, խոսքն իսկական եւ ճշմարիտ մտավորականի մասին է:

Վստահ եմ՝ նրանք հոկտեմբերի 21-ին քվեարկության կգնան գիտակցաբար:

– Տեղյա՞կ եք տարածքային եւ տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմին, ի՞նչ սկզբունքով են ձեւավորված դրանք, վստահություն ներշնչո՞ւմ են, թե՞...

– Կոնկրետ մարդկանց չեմ ճանաչում, բայց ձեւավորման սկզբունքներին ծանոթ եմ, եւ կարող ենք վստահել:

– Կան հարցեր, որոնք, որքան էլ տհաճ է լսել, պետք է, այնուամենայնիվ, բարձրաձայնել ու քննարկել: Եթե նույնիսկ շրջանցենք, ապա դա չի նշանակում, որ նման հարցեր չկան, որ մարդիկ չեն խոսում այդ մասին:

Օրինակ, քննարկվում է հանգամանքը, թե Գեւորգ Փարսյանը դատված է, ինչը, իբր, համատեղելի չէ համայնքապետի աթոռին հավակնող մարդու ձգտումներին:

– Իրավական առումով դատվածություն չունեմ, քանի որ այն մարված է՝ անցել է տասնհինգ տարի:

Ուզում եմ նաեւ նշել, որ արարքիս շարժառիթն իմ եւ իմ սիրած աղջկա պատվին ու արժանապատվությանն էր առնչվում: Եվ չեմ ափսոսում կատարվածի համար:

Կուզենայի, որ հանրության մեջ շատ լինեին տղամարդիկ, ովքեր պատրաստակամ են տեր կանգնելու իրենց ու իրենց մերձավորների պատվին ու արժանապատվությանը:

Եվ ավելորդ եմ համարում մտայնությունը, թե իբր նման մարդկանց ձգտումը համատեղելի չէ համայնքապետի պաշտոնին:

– Եվս մի հարց, որ դարձյալ չենք կարող շրջանցել:

Կապանում, նաեւ համայնքի բնակավայրերում, շրջանառվում է խոսակցություն, թե քաջարանյան վերնախավն ուզում է Կապանի համայնքապետարանում տեսնել իր թեկնածուին:

Եվ այդ թեկնածուն, իբր, Գեւորգ Փարսյանն է:

Ձեր անկեղծ պատասխանն ենք ակնկալում:

– Եկեք չշեղվենք իրականությունից. Քաջարանի վերնախավի հետ ունեմ ջերմ, գործնական հարաբերություններ: Բայց տեղյակ չեմ՝ նրանք նման հավակնություններ ունե՞ն, թե՞ ոչ:

Նման խոսակցություն երբեւէ ինձ հետ չի եղել:

Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատում, եւ ոչ միայն այնտեղ, ունեմ բազմաթիվ ընկերներ, մտերիմներ, ովքեր պատրաստակամ են կանգնելու իմ կողքին:

Մնացյալը ենթադրությունների ոլորտից է:

– Մենք կարեւոր շատ հարցեր քննարկեցինք, բայց գլխավոր հարցը բաց մնաց՝ ինչո՞ւ եք ուզում ընտրվել Կապան համայնքի ղեկավար:

– Անկեղծ լինեմ՝ առաջադրվելու գաղափարը բխել է համայնքի ընտրողների մի մեծ խմբից:

Բայց ինքս կարող էի եւ չհամաձայնել, եթե իմ մեջ չտեսնեի այդ ուժն ու կարողությունը, նաեւ վստահությունը:

Ես պարզապես ծառայությունս եմ առաջարկում իմ համայնքին՝ հավատացնելով, որ արժանապատվորեն կկատարեմ համայնքապետի պարտականությունը:

– Եվ ի՞նչ կարող եք անել Կապանի ու մերձակա գյուղերի համար, որ ուրիշները չեն կարող անել:

– Ես չեմ կարող ասել, թե մյուս թեկնածուները հաղթելու դեպքում ինչ կարող են անել կամ չանել:

Ես իմ մասին կարող եմ խոսել՝ պատրաստ եմ անմացորդ նվիրվել իմ համայնքին, լինել յուրաքանչյուր կապանցու կողքին:

Ավելին ասեմ՝ պատրաստ ենք մեր ընտանիքի հնարավորությունները ծառայեցնել համայնքի առջեւ կանգնած խնդիրների լուծմանը:

Իսկ անելիքներն այնքան շատ են, որ մեկ հարցազրույցում հնարավոր չէ թվարկել:

– Ձե՞ք կարծում, որ խոշորացված համայնք կառավարելը լուրջ բարդություն է ներկայացնում. Կապան գումարած 31 վարչական շրջան՝ 37 գյուղական բնակավայրով՝ յուրաքանչյուրը բազում հոգսերով եւ հիմնախնդիրներով՝ տարիներով չլուծված...

– Ամեն ինչ կախված է նրանից, թե որքանով ես լուրջ վերաբերում հիմնախնդիրներին, որ կան համայնքի բնակավայրերում:

Համաձայն եմ մտքին, որ Կապան բազմաբնակավայր համայնքը կառավարման տեսակետից շատ բարդ օրգանիզմ է:

Թույլ եմ տալիս ասել, որ ինքս պատասխանատու մարդ եմ եւ առկա խնդիրներին վերաբերում եմ մեծ պատասխանատվությամբ:

Իսկ այդ խնդիրների մասին առավել հանգամանալից կխոսեմ այն ժամանակ, երբ ընտրվելուց հետո կգույքագրեմ, կհաշվառեմ ամեն մի բնակավայրի առաջնահերթ խնդիրները:

– Այդուհանդերձ, որո՞նք են, ըստ Ձեզ, Կապան խոշորացված համայնքի առջեւ ծառացած առավել մտահոգիչ խնդիրները:

– Նախեւառաջ գյուղապահպանություն, բնապահպանություն, մշակույթ, բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացում...

– Հիմա որքա՞ն է Կապան համայնքի տարեկան բյուջեն. եթե չենք սխալվում՝ վարչական բյուջեն 1,8 մլրդ դրամ է, որի մեջ սեփական եկամուտը՝ 536 մլն դրամ, եւ վարչական բյուջեի մոտ 85 տոկոսն օգտագործվում է աշխատավարձի, ինչպես եւ ենթակառուցվածքների սպասարկման վրա:

Ինչպես տեսնում եք, նման պայմաններում համայնքային բյուջեի միջոցներով շատ թե քիչ կարեւոր մեկ-երկու հարց հազիվ թե հնարավոր լինի լուծել:

Ի՞նչ եք մտադիր անել այդ իրավիճակում:

– Ըստ իմ նախնական ուսումնասիրությունների՝ համայնքային բյուջեի սեփական եկամտի մասն ավելացնելու տեղ ունենք:

Բայց դրանով խնդիրներ չենք կարող լուծել:

Անպայման պետք է ընդգրկել

6

Ես չեմ կարող ասել, թե մյուս թեկնածուները հաղթելու դեպքում ինչ կարող են անել կամ չանել: Ես իմ մասին կարող եմ խոսել՝ պատրաստ եմ անմացորդ նվիրվել իմ համայնքին, լինել յուրաքանչյուր կապանցու կողքին:

Գերդաստան

Գեւորգի թիկունքին, նախեւառաջ, ընտանիքն է կանգնած լինելու, իսկ հետո...

Զորավոր է այն ազգը, որ ունի զորավոր ընտանիքներ:

Մուրացան

Եթե ուզում ես լիարժեք կյանքով ապրել, ծառ տնկիր, տուն կառուցիր եւ երեխաներ մեծացրու, – հավաստում է ժողովրդական իմաստությունը:

Կապանի տարածաշրջանում (եւ ոչ միայն) հմուտ շիանարարի համբավ ունեցող «Նորոգշին» ՍՊԸ տնօրեն Ռազմիկ Փարսյանը եւ Սուսաննա Համբարձումյանը երեք որդի են դաստիարակել՝ Գեւորգ, Գրիշա, Հովհաննես:

Ռազմիկ Փարսյանի՝ Գարեգին Նժդեհի 2/36 հասցեում գտնվող հայրական տան տեղում այժմ մի առանձնատուն է վեր խոյանում: Հայրական տունը կառուցվել էր տակավին 1953 թվականին, ուստի որոշեց՝ հնի տեղում պիտի լինի նորը՝ ավելի հարմարավետն ու բարեկարգը: Ընդ որում՝ բարեկարգվել է ոչ միայն դրա շրջակայքը, այլեւ թաղամասի մի ամբողջ հատվածը եւ ճանապարհը:

Այդ հոյակերտ տանը բնակվում է մի մեծ ընտանիք՝ երեք որդիներով, երկու հարսներով, թոռնուհիներով:

Ընտանեկան ջերմության պակաս չկա Փարսյանների օջախում: Երեկոյան հայր ու որդիներ քննարկում են օրվա ընթացքում արվածը, նախանշում հաջորդ օրվա անելիքը, քանի որ որդիներից յուրաքանչյուրը մի սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է ղեկավարում. Գեւորգը՝ «Ռազ-Բիլդինգ», Գրիշան՝ «Գրիգ բիզնես»:

Այսպիսի մի օրինաչափություն էլ կա. առավոտ կանուխ տնից առաջինը Գեւորգն է դուրս գալիս, երբ տնեցիները դեռ քնած են լինում:

Ընտանիքի հայրը՝ Ռազմիկ Փարսյանը, ավարտել է Երեւանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի «Արդյունաբերական եւ քաղաքացիական շինարարություն» ֆակուլտետի երեկոյան բաժինը:

Ծնողներին հոգս չպատճառելու համար ցերեկն աշխատում էր, երեկոյան՝ սովորում:

Ուսումը 1979-1981թթ. ընդհատվել է խորհրդային բանակում սահմանադրական պարտքը կատարելով:

Հինգ տարի աշխատել է «Երեւաննախագիծ» ինստիտուտում, այնուհետեւ շինվարչությունում աշխղեկ է եղել:

1985-ին անդրանիկ որդին՝ Գեւորգը ծնվելուց հետո տեղափոխվել է հայրենի քաղաք:

Կապանի շինարարության վարչությունում աշխատանքային գործունեությունը սկսեց որպես վարպետ, այնուհետեւ տեղափոխվեց «Հայջրմուղկոյուղու» Կապանի մասնաճյուղ:

Երբ Խորհրդային Միությունը փլուզվեց, եւ սկսվեց կոոպերատիվ շարժումը, Կապանում առաջին կոոպերատիվներից մեկը՝ «Ուրարտու» անվամբ, ինքը հիմնադրեց 1988-ի վերջերին:

Հայ-ադրբեջանական հակամարտության օրերին չհեռացավ հայրենի քաղաքից: Այն ժամանակ ծնվել էին Գեւորգն ու Գրիշան:

Այնուհետեւ նորից շիննորոգման վարչությունում էր, իսկ 1998-ին սեփականաշնորհեց այդ հիմնարկը, եւ նրա գործունեությունը կապված է հայրենի քաղաքի բարեկարգման ու շիննորոգման հետ:

Գնահատվե՞լ է նրա վաստակը:

Նախ՝ նրա գնահատանքն այն բազում օրինանքի ու երախտագիտության խոսքերն են, որոնք լսում են նրանցից, ում օգնության ձեռք է մեկնել: Պետական պարգեւն էլ յուր ժամանակին եկավ. 2016-ին ՀՀ անկախության 25-րդ տարեդարձի առթիվ հանրապետության նախագահի կողմից նրան շնորհվեց «Երախտագիտության» մեդալ: Անկեղծ ասած՝ այդ ժամանակ էինք ցանկանում անդրադառնալ Ռազմիկ Փարսյանի կյանքին ու գործին, բայց քաղաքավարությամբ հրաժարվեց՝ հասկանալ տալով, որ ինքն ավելի շատ եւ ամենից առաջ գործի մարդ է...

Մեր զրույցի ընթացքում կրկնում էր՝ մեր քաղաքն առաջադիմելու փոխարեն հետընթաց է ապրում. *«Կապանցին արժանավայել կյանքով պիտի ապրի, մարդկանց երեսից կորել է ժպիտը, հազար ու մի հոգս ու ցավ ունեն, հանապազօրյա խնդիրներ: Սա է ինձ տխրեցնում: Կապանցին կամաց-կամաց պիտի վերագտնի իրեն: Որպես շինարար ասեմ, որ քաղաքում բազում շտկելու գործեր կան, անկախության տարիներին քիչ բան է արվել, շատ քիչ»:* Ասվածին հավելում է, որ ընտրվելու դեպքում Գեւորգի թիկունքին, նախեւառաջ, ընտանիքն է կանգնած լինելու, իսկ հետո. *«Դրսում էլ պատվախնդիր կապանցիներ ունենք՝ պատրաստ մեզ օգնելու, Կապանում քար քարի վրա դնելու»:* Պատեհ առիթ է նշելու, որ Ռազմիկին էլ՝ կողքինին օգնելու պատրաստակամությունը երբեք չի լքում, ինչի մասին փաստում են նրան ճանաչողները:

> ...Փարսյանների ընտանեկան հարկի տակ իրադարձություն է սպասվում. ընտանիքի ավագ որդին առաջադրվել է Կապան խոշորացված համայնքի ղեկավարի թեկնածու:

Ծանր է համայնքի ղեկավարի խաչը: Ինչպե՞ս այդ մտադրությանն անդրադարձան ծնողները. *«Մայրս առանձնապես չարտահայտվեց այդ մասին, իսկ հայրս ավելի շատ դեմ էր, քան՝ կողմ»*:

– Գեւորգը երեխաներիցս ամենալավ սովորողն էր, նա բոլորից առանձնանում էր պատասխանատվության զգացումով, բարձր դասարաններից նպատակ էր դրել

Հարցազրույց համարին

ԳԵՎՈՐԳ ՓԱՐՍՅԱՆ.

«Ես ծառայությունս եմ առաջարկում իմ համայնքին՝ հավատացնելով, որ արժանապատվորեն կկատարեմ համայնքապետի պարտականությունը»

↘5

ֆինանսավորման այլ աղբյուրներ՝ միջազգային դոնորներ կամ ներդրողներ՝ կոնկրետ ծրագրերով, հիմնադրամների միջոցներ, իսկ ամենակարեւորը՝ ապահովել տարածաշրջանի տնտեսվարող սուբյեկտների մասնակցությունն առկա խնդիրների լուծմանը: Եվ, իհարկե, համայնքի ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում:

– Նման ընտրությունից առաջ սովորաբար քննարկվող-շահարկվող հարցերից մեկը (եւ ոչ երկրորդականը) հետեւյալն է՝ նոր համայնքապետը կգա ու նախկին աշխատողներին կազատի, իր թիմակիցներին կբերի...

Որքանո՞վ եք ողջամիտ համարում այդ ճանապարհը, որը, որքան էլ դատապարտելի է, վերեւից ներքեւ շատերին է հրապուրել եւ հրապուրում: Եվ այդպես՝ տարիներ շարունակ:

– Կադրային արմատական փոփոխություններ չեմ պատրաստվում անել:

Ավելի շատ հակված եմ մտքին, որ մարդկանց լիարժեք ինքնադրսեւորման հնարավորություն տանք:

Բնականաբար, եթե պաշտոնյան իր պարտականությունները պատշաճ չի կատարում, պետք է զիջի իր տեղը: Եվ նման դեպքում ճանապարհ է բացվելու ոչ թե Ձեր իսկ նշած «իմ թիմակիցների», այլ պրոֆեսիոնալների համար:

– Տեղական ինքնակառավարումը պետական կառավարման յուրահատուկ ոլորտ է՝ սահմանված առանձնապես ՏԻՄ-ի մասին օրենքով:

Բայց, ինչպես ցույց է տալիս փորձը, համայնքապետի հաջողությունը պայմանավորված է ավագանու, մարզպետարանի, հանրապետական գերատեսչությունների տեղական կառույցների հետ համագործակցության

ընդունվել պետհամալսարանի իրավաբանական ֆակուլտետ, հասավ իր նպատակին, բարձր միավորներով ընդունվեց: Ուսման հարգը գնահատող երեխա էր, եւ պատահական չէ, որ իրավաբանականն ավարտելուց հետո նաեւ տնտեսագետի մասնագիտություն ստացավ: Ուսանող եղած ժամանակ միշտ հարցնում էր՝ ի՞նչ կա Կապանում, նրա համար ամենից առաջ հետաքրքիր էր, թե ինչ է կատարվում իր ծննդավայրում: Երբեւէ ցանկություն չի ունեցել ապրել Երեւանում, թեեւ դրա հնարավորությունը կար: Նաեւ նկատել եմ,

Մարդկային դրական գծերից առանձնացնում է պարկեշտությունը, արդարամտությունը, իսկ իր բնավորության թերի գծերից առանձնացնում է այն, որ շուտ է բռնկվում:

որ իր տարեկիցների շրջանում հարգանք ուներ, ինչ-ինչ հարցերում խորհրդակցում էին նրա հետ, ինքն էլ միշտ պատրաստ էր ընկերոջ թիկունքին կանգնել: Ժամանակից շուտ էր հասունացել, գուցե նրանից է, որ վաղ տարիքից շփվում եւ ընկերություն էր անում տարիքով իրենից բարձր տղաների հետ, – որդու մասին պատմում է մայրը՝ Սուսաննան:

Նաեւ հիշում է, որ դպրոցական արձակուրդի օրերին, նաեւ, երբ ուսանող էր՝ ամռանը, գյուղում պապի՝ Կապանում ճանաչված եւ հարգված էներգետիկ Գրիշա Փարսյանի մոտ էր լինում Գեւորգը, օգնում նրան գյուղատնտեսական աշխատանքներ կատարելիս, գերանդիով խոտ հնձում: Երեք ամիս պապից աշխատանքային դաստիարակության դասեր էր առնում: Նաեւ պապից տեղեկություններ ստանում Փարսյանների գերդաստանի մասին:

Չմոռանանք, հոդվածի սկզբում հիշատակված ժողովրդական իմաստության մեջ, որպես մնայուն գործ, նշվում էր նաեւ ծառ տնկելու մասին. իմացանք, որ 530 ընկուզենի է տնկվել Վանեք գյուղում գտնվող Փարսյանների առանձնատան տնամերձ հողամասում:

Պատասխանատվության ծանր բեռ է պատրաստվում վերցնել Գեւորգը, որի հաղթահարումը ֆիզիկական եւ բարոյահոգեբանական ուժեր է պահանջում: Մայրն այս առիթով պատասխանում է, որ միայն նրա առողջության մասին է մտածում, ինչպես ամեն մի մայր կմտածի իր որդու մասին:

Ինչպե՞ս է Գեւորգ Փարսյանը մեկնաբանում համայնքի ղեկավար առաջադրվելու իր մտադրությունը. *«Երկրում տեղի է ունեցել ժողովրդական շարժում, որի արդյունքում տեսնում եւ հնարավոր եմ համարում առանց կաշկանդվածության իրականացնել այն բոլոր մտահղացումները, որոնք պատկերացնում եմ, որոնք կարելի է իրականացնել ի շահ մեր համայնքի, մեր ժողովրդի բարեկեցության: Անհրաժեշտ է, որ մեր քաղաքը լինի մաքուր, կոկիկ, գեղեցիկ: Շատ կարեւոր է, որ Կապանի կյանքում մշակույթը մեծ տեղ ունենա, որովհետեւ մշակույթն է մեր քաղաքի ամենակարեւոր այցեքարտը: Չմոռանանք՝ տասնամյակներ ի վեր մեր քաղաքը հայտնի է մշակութային ավանդույթներով»:*

Ինչպե՞ս է պատրաստվում լուծել համայնքի առաջ ծառացած հիմնախնդիրները:

– Ասեմ, որ կան նախնական պայմանավորվածություններ իմ ընտանիքի, բարեկամների եւ այն ընկերների հետ, ովքեր տնտեսվարողներ են՝ Հայաստանում եւ նրա սահմաններից դուրս: Իրենք պատրաստակամություն են հայտնել անհրաժեշտության դեպքում ներդրումներ կատարել՝ մեր համայնքում տնտեսական ակտիվությունը բարձրացնելու նպատակով:

Այնուամենայնիվ, ի՞նչն է առավել պակասում մեր քաղաքին: Պատասխանում է՝ բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, ավելի ստույգ, այդ մթնոլորտն առողջացնելու խնդիր կա, եւ հավելում, որ մարդկանց դեմքին անուրախ կյանքի թախիծ կա դրոշմված…

Մասնագիտության բերումով ավելի շատ բացեր տեսնում է քաղաքաշինության ոլորտում. *«Շատ մեծ ցանկություն ունեմ, որ նախկին մսի կոմբինատի մոտի թունելից սկսած մինչեւ Բաղաբերդ թաղամասի վերջնամասը բարեկարգել, ակնահաճո տեսքի բերել, որ մեր քաղաքի հյուրերը, երթեւեկելով այդ հատվածով, հիանան քաղաքի գեղեցիկ տեսարաններով, ոչ թե ներկայիս քանդված, անբարեկարգ մայթերով, կոտրատված եզրաքարերով, Ողջի գետի կիսաքանդ հենապատերով տխուր պատկերները տեսնեն: Դրանք շուտափույթ վերականգնման, վերակառուցման կարիք ունեն: Դա միջպետական ճանապարհ է, որով մեր քաղաքը ելումուտ անող հյուրերն են երթեւեկում:*

Ինչպես մեծ քաղաքների այցեքարտը համարում են օդանավակայանը, որտեղից առաջին տպավորություն են ստանում հյուրերը, այնպես էլ մեր քաղաքի հյուրերն առաջին տպավորությունը ստանում են այդ ճանապարհահատվածով, եւ հաճելի պիտի լինի այդ տպավորությունը»:

Ինչպիսի՞ն է մարդկային հարաբերություններում Գեւորգ Փարսյանը. *«Թող ուրիշներն ինձ գնահատեն»,* – միանգամայն օրինաչափ պատասխան է տալիս:

Իր հավաստմամբ՝ հորից բարություն է ժառանգել, կողքինին օգնելու պատրաստակամություն, մայրիկից՝ համառությունը: Իրեն Հայ առաքելական եկեղեցու հետեւորդ է համարում, դեռ ավելին՝ 2014-ին Կապանի սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու խաչքավորն էր:

Գեւորգ Փարսյանը որեւէ կուսակցության չի պատկանում, ասել է թե՝ նրա թիկունքին որեւէ քաղաքական ուժ չկա: Բայց համախոհներ ու մտերիմներ ունի համարյա բոլոր կուսակցություններից, անառարկելի հեղինակություն ունի երիտասարդության շրջանում, որոնց էլ համարում է իր հիմնական ընտրազանգվածը եւ որոնց վրա հենվելու է ընտրապայքարի ընթացքում:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Գեւորգ Փարսյանի գլխավորած ընկերությունը՝ «Ռազ-Բիլդինգ»

Ընկերությունը հիմնադրել է Ռազմիկ Փարսյանը՝ 2004թ. հոկտեմբերի 4-ին:

Զբաղվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի պատրաստմամբ եւ շինարարությամբ, ինչի համար ունի համապատասխան թույլտվություն:

Ընկերությունը հեղինակ է բազմաթիվ նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ Կապանի բազմաբնակարան շենքերի տանիքների նորոգում, հանրակրթական դպրոցների նորոգում, Կապանի երաժշտական ուսումնարանի երգեհոնային դահլիճի նորոգում, Կապանի մայթերի եւ սալվածքների նորոգում, փոքր հէկերի կառուցում, լողավազանի, սպասարկման օբյեկտների, արտադրական տեղամասերի կառուցում, Վաչագան գետի հենապատերի կառուցում եւ հունի բարեկարգում…

Ընկերության շինարարական աշխատանքների, կառուցումների ծավալուն ցանկում առավել ուշագրավը, անտարակույս, մարզկենտրոնի Գարեգին Նժդեհի հրապարակի վերակառուցումն է եւ երգող շատրվաններ հրաշալիքի կառուցումը, որը կյանքի ուղեգիր ստացավ 2015թ. հոկտեմբերին:

անկեղծությամբ եւ արդյունավետությամբ:

Դուք համաձա՞յն եք մեր դիտարկմանը, պատրա՞ստ եք արդյունավետ համագործակցության:

– Տեղական ինքնակառավարումը հանրային կառավարման ձեւ է, ու հիմնված է նախ եւ առաջ ժողովրդավարության սկզբունքների վրա:

Տեղական ինքնակառավարումը երբեք չպետք է շփոթել պետական կառավարման հետ, դրանք տարբեր ինստիտուտներ են:

Ինչ վերաբերում է համագործակցությանը, ապա դա անհրաժեշտ գործոն է, որը պայմանավորված է ե՛ւ իրավական նորմերով, ե՛ւ, թույլ տվեք ասել, անձնական հարաբերություններով:

– Ինչպե՞ս եք վերաբերվում Ձեր մրցակիցներին, կուզենայի՞ք գնահատել նրանց հնարավորությունները, ուժեղ եւ թույլ կողմերը:

– Հարգանքով եմ վերաբերվում մրցակիցներիս, իսկ մնացյալն ընտրողների որոշելիքն է:

– Հավանաբար Դուք ամփոփիչ խոսքով հանդես կգաք քվեարկությունից մեկ-երկու օր առաջ ու կդիմեք ընտրողներին, սակայն կուզենայինք մեր զրույցի ավարտին եւս լսել Ձեր խոսքը, հորդորը, կոչը՝ ուղղված Կապան համայնքի ընտրողներին:

– Նախ քվեարկությանն ակտիվ մասնակցելու կոչ եմ անում:

Քվեարկեք ձեր խղճի մտոք:

Իմ նախընտրական շտաբով, վստահված անձանցով, համակիրներով յուրաքանչյուրիդ հետ ենք, եւ հավաստիացնում եմ, որ տեր ենք կանգնելու ամեն մի քվեի, նպաստելու ենք ձեր ազատ կամարտահայտմանը:

Հարցազրույցը՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ

Ծննդավայրի շենացումը՝ հավատամք

Բարի աչքով նայես, Ապրված,
Իմ այս մի բուռ Հայաստանին...

Համո Սահյան

ՄԱՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կապանապուն իմ

Հայրենի՛ երկիր, եզե՛ր հայրենի
Կապանա աշխարհի, իմ սեր բարձրագույն,
իմ սեր անթերի.
Խոսքեր չեն սրանք կարոտի պահի,
Այլ ինքնաթարգման շշուկ ու շշունջ,
Որ մրմնջում ենք աղոթքի պահին՝
Որպես ինքնաբավ մենախոսություն՝
Անունկնդիր ու անհանդիսապես
- Առաջին սիրո դող ու թրթիռով
ասված խոսքի պես,
Երկյուղածությամբ ու ակնածանքով,
Որ չանէանա , չցնդի հանկարծ
Իմ սերը խորունկ ու հավատն առ քեզ ...
Կապանապուն իմ, ամենից առաջ՝
հոգուս շքերթն ես,
Իմ խորունկ շերտն ես, ինձ
պահող հենքն ես,
Ծնող մորս պես իմ թաք ու կենտն ես,
Դու իմ միակն ես, իմ կենսակերպն ես ,
Նաեւ՝ ինձ զգոն, հաստատուն պահող
այն մրմունջ վերքն ես ,
Որից ամրանում, առաջ են մղվում.
Դու իմ վերելքն ես,
Իմ մեջքին՝ թիկունք, անառիկ բերդն ես,
Իմ Խուստուփ լեռն ես, իմ Ողջի գետն ես,
Իմ Դավիթ բեկն ես,
Բաղակու քարը, իմ Բաղաբերդն ես,
Իմ Հալիձորն ես, Վահանավանքը,
Իմ ժողովրդի տքնությունը լուռ ու
համբերանքը,
Առանց քեզ, Կապան, ճկույթ էլ չարժե
իմ ապրած կյանքը ...

1

Խոսք բնտրողին

Կառուցենք, նորոգենք, շենացնենք...

հինգ տարում:
Դրա երաշխիքը նրա ազնվությունն ու մաքրությունն են, նրա ինտելեկտուալ բարձր մակարդակն է, նրա կազմակերպչական ունակություններն են ու փորձը, մարդկանց լսելու, մարդկանց հետ շփվելու եւ յուրաքանչյուրին հարեհաս լինելու կարողությունը, նրա արմատ-գերդաստանի անցած ճանապարհն ու նվիրվածությունը Կապանա տանը, համայնքի խնդիրներին նրա քաջատեղյակությունն ու դրանցից ամեն մեկի լուծմանը հետամուտ լինելու պատրաստակամությունն ու վճռականությունը:
Հիշեք, Գեւորգ Փարսյանը որեւէ մեկի, որեւէ թիմի հանդեպ պարտավորվածություն չունի, որեւէ մեկից կամ թիմից կախվածություն չունի:
Նա պարտավորվածություն ունի միայն Կապանի ու կապանցիների հանդեպ, որոնց պատրաստ է ծառայելու:
Նա ջատագովն է Հայաստանում տեղի ունեցող ողջամիտ եւ ազգանպաստ ամեն մի փոփոխության:
Նա նվիրյալն է մեր միասնության, կողմնակիցը՝ փոխադարձ սիրո եւ համերաշխության մթնոլորտի վերականգնման:
Նա երկրի խաղաղ ընթացքի զինվորն է ու մշակը, մեր երազանքների Հայաստանի գաղափարակիրը, որի արժանապատիվ մասը պետք է լինի եւ անպայման լինելու է մեր փոքր հայրենիքը, մեր հայրենի տունը, որի անունն է Կապան:
Եւ ուրեմն՝ հոկտեմբերի 21-ին անպայման գնանք քվեարկության եւ անպայման քվեարկենք Կապանի համայնքապետի արժանավոր թեկնածու Գեւորգ Փարսյանի օգտին:

Նախընտրական շտաբ

Խուստո՛ւփ, հայացքիդ ներքո՝
Դարերը ծնկի են գալիս...

Մարի Առաքելյան

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2500, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 10.10.2018թ.:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ: